20095

372
2-97

1895

2010

2002

372
Շ-97

# ՀԱՄԱՌՕՏ ՀԱՇԻՒ

## ՄՏԻՑ ԵՒ ԾԱԽՈՒՑ ՇՈՒՇՈՒ „Ս. ՄԱՐԻԱՄԵԱՆ" ՀԱՅՈՑ ՕՐԻՈՐԴԱՑ ԵԿԵՂ.-ԾԽԱԿ. ԵՐԿԴԱՍԵԱՆ ՈՒՍՈՒՄՆ. ՎԱՍՆ $18^{94}/_{95}$ ՈՒՍ. ԱՄԻ.

| № | ՄՈՒՏՔ | Ռուբլի | Կոպ. | № | ԾԱԽՔ | Ռուբլի | Կոպ. |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | $18^{93}/_{94}$ ուս. տարուց մնացորդ գումար առ մէկն սեպտեմբերի $18^{94}/_{95}$ ուս. ամի | 4750 | 28 | 1 | Ուսուցչական խմբին և ծառաներին | 5459 | 64 |
| 2 | Ուսման թոշակադրամ աշակերտուհիներից | 4156 | — | 2 | Բնակարանի վարձ (երկու շինութիւնների) | 950 | — |
| 3 | Նպաստ Շուշու չորս եկեղեցիներից | 720 | — | 3 | Վառելիքի (փայտի և նորա համար ունեցած ծախք) | 298 | 53 |
| 4 | Արդիւնք ծախուած ձեռագործներից | 921 | 20 | 4 | Ձեռագործի նիւթերի | 617 | 37 |
| 5 | Նուէրք բարեպաշտ ժողովրդականներից | 1183 | 98 | 5 | Դասարանական իրերի և նոցա նորոգութեանց | 112 | 46 |
| 6 | Տոկոսիք՝ տոկոսաբեր արժեթղթերից և դրամագլխից | 486 | 2 | 6 | Կեղտոտութիւններ դուրս տանելու, ախտահանական տեղերի և այլ մանր և անսպասելի ծախքերի | 147 | 30 |
| | Գումար տարեկան մուտքի | 12217 | 48 | 7 | Ջրի | 39 | 45 |
| | | | | 8 | Ուսումնարանի և Հոգաբարձութեան գիւանական ծախք | 59 | 20 |
| | | | | 9 | Հոգաբարձութեան կողմից չքաւոր աշակերտուհիներին դրուած օժանդակութիւն | 11 | 65 |
| | | | | | Գումար տարեկան ծախքի | 7695 | 60 |

Ծանօթութիւն. Ա—Առ մէկն սեպտեմբերի $18^{95}/_{96}$ ուս. ամի մնացորդ գումար 4521 րուբլի 88 կոպէկ:

Բ—Առ մէկն սեպտ. $18^{95}/_{96}$ ուս. ամի դպրոցապատկան անշարժ դրամագլուխ պիտի լինէր 5458 րուբ: Այդ գումարից ընթացիկ ծախքերի համար փոխարինաբար վերցրուած է 936 ր. 12 կ., որը անմիջապէս պիտի լրացնել $18^{95}/_{96}$ ուս. տարուայ մուտքից, որը և արդէն լրացրուած է:

Գ—Եկեղեցիներից ստացած 720 րուբլուց 20 րուբ. ստացուած է անցեալ տարիներից մնացած պարտքերից: $18^{94}/_{95}$ ուս. տարուայ համար մնում է պարտք տեղւոյս Ագուլեաց եկեղեցու վրայ 100 րուբլի:

Դ.—Մուտքի 6-րդ յօդ. ցոյց տուած 486 ր. 2 կոպ. տոկոսադրամից 174 ր. 85 կոպ. ստացուած է դպրոցապատկան բոլոր 5% արժեթղթերը պետական բանկի 4% վկայականների փոխարինելուց: 50 ր. 10 կոպ. ստացուած է թեմական դպրանոցի հոգաբարձութիւնից իբրև տոկոս այն 1252 րուբ. 50 կոպ., որը օրիորդաց դպրոցը թեմ. դպ.-ից բաժանուելուց թողել է վերջինի գանձարանում (1889 թ.), իսկ մնացեալ 261 ր. 7 կոպ. ստացուած է այն նուիրած գումարներից, որոնք մասամբ մտած են դպրոցի գանձարանը և մասամբ գտնւում են կամ հանգուցեալ նուիրատուների ժառանգների մօտ կամ զանազան հիմնարկութիւններում:

Ե.—Ծախքի 6-րդ յօդ. ցոյց տուած 147 ր. 30 կ. գումարի մէջ մտնում են. ա) քաղաքական արխիտեկտօր պ. Խարչէնկօի օրիորդաց դպ. նոր շինութեան մակարդակը կազմելու համար երկրորդ նուագում տուած 75 ր. և Մոսկուայից եղբ. Ժամհարեանցների դրամատնից գումար ստանալու համար արած 4 ր. 6 կ. ծախքը, որոնք փոխարինաբար վերցրուած լինելով դպրոցի անշարժ դրամագլխից կլրացնուին, երբ հանգուցեալ Խանդամիրեանցի կտակած գումարից այդ ծախքերը կստացուին. և բ) պ. Գրիգոր Տէր-Միքայէլեանցի դպրոցին ի յիշատակ իւր հանգուցեալ կնոջ Մարթայի նուիրած 300 րուբ. անձեռնմխելի գումարից ստացած 12 ր. 40 կ. տոկոսադրամը, որով ըստ ցանկութեան նուիրատուի տրւում են մրցանակներ դպրոցի երկու աշակերտուհիների:

Զ.—$18^{94}/_{95}$ ուս. տարում ստացուած է կամաւոր նուէրք հետեւեալ բարեպաշտ անձերից. Սերգէյ Ի. Տէր-Գրիգորեանցի տան վարձից 28 ր. 98 կ. Բաբա Բեգլարեանցից թեմ. դպ. հոգաբարձութեան միջոցով 50 րուբլի. Պարսկաստանի Սալմաստ քաղաքի հայ վաճառականներից պ. Գերասիմ Ա. Գրիգորեանցի ձեռօք իրենց որդեգրուհու ուսման պիտոյքի համար 10 ր. Յովհաննէս Մանկասարեանցից ի յիշատակ իւր հանգուցեալ կնոջ Սօֆիայի 25 ր. Տաշալթեցի Ալէքսան Թէոսեանցից 10 ր. Գրիգոր Միրզայեանցից ի յիշատակ իւր հանգուցեալ մօր Մանամի 10 ր. Այս գումարը պ.-ը խոստացել է նուիրել իւրաքանչիւր տարի սկսած 1890 թ. մինչև քանի տարի: Հանգուցեալ տիկ. Մարիամ Տէր-Միքայէլեանցի երեք աղջիկներից ի յիշ. իրենց հանգ. մօր 100 ր. Գէորգ Գ. Մելիք-Ղարագէօզեանցից ի յիշ. իւր հանգուցեալ հօր Պօղոսի 300 ր. անձեռնմխելի: Մաաթէոս Յովսէփեանցից ի յիշ. իւր հանգուցեալ հօր Մանասի 100 ր. Հանգուցեալ տիկ. Քալօ Ի. Մելիք-Ջահնազարեանցի չորս աղջիկներից ի յիշ. իրենց հանգ. մօր 100 ր. տիկ Մարթա Խանդամիրեանցից ի յիշ. իւր հանգ. դուստր Մարիամի 150 ր. տիկին Աննա Բալայեանցից ի յիշ. իւր հանգ. ամուսին Գասպարի 200 ր. անձեռնմխելի: Մոսկուաբնակ Բաղդասար Ի. Արզումանեանցից 100 ր.: Ընդամէնը ստացուած է 1183 ր. 98 կ., որից 500 րուբ. ըստ ցանկութեան նուիրատուների պիտի մնայ անշարժ և սրա միայն տոկոսը պիտի գործադրել, իսկ մնացեալ 683 րուբ. 98 կոպ. գործադրելի ընթացիկ ծախքերի համար:

Է.—$18^{94}/_{95}$ ուս. տարում հետեւեալ անձերը պահել են դպրոցումս որդեգրուհիներ վճարելով նորանց տարեկան ուսման վարձը. Թեմիս վեհ. Առաջնորդ Կ.-եպ. Այվազեանցն մի լիաթոշակ աշակերտուհի. Մոսկուաբնակ եղբարք Ժամհարեանցներն 6 լիաթոշակ աշակ. Մոսկուաբնակ տիկ. Կատարինէ և օր. Մարգարիտ Ժամհարեանցներն մի մի լիաթոշ. աշակ. Բաբա Բեգլարեանցն 4 լիաթոշ. աշակ. Իսահակ Թադէոսեանցն 2 լիաթոշ. աշակ. Սալմաստ քաղաքի հայ վաճառականներն, Խաչատուր Ադամեանցն, Գերասիմ Ջահնազարեանցն, Գաբրիէլ Ջահրադեանցն, Բաբա-բէկ Թւմնիբէկեանցն, Հայրութիւն Աւագ Իսախանեանցն, տիկին Նունէ Սարուխանեանցն, տիկին Նանագիւլ Խունունց, Մինաս Խունունց, Աստուածատուր-բէկ Տէր-Գասպարեանցն Արամ Ադամեանցն, Համբարձում Ժամհարեանցն, Մովսէս Ներսէսեանցն և Յովհաննէս Զուրաբեանցն մի մի լիաթոշակ աշակ.: Տիկին Մինա Տէր-Սահակեանցն, Կոստանդ Պետրոսեանցն և Ամիրբար Օրբէլեանցն մի մի կիսաթոշակ աշակերտուհիներ: Անկախ վերև յիշածից դպրոցումս սովորել են որդեգրուհիներ յանուն այն հանգուցեալ նուիրատուների, որոնք այդ նպատակով նպաստել են դպրոցիս կամաւոր նուիրատուութիւններով, այն է՝ յանուն հանգ. տիկ. Ս. Դօլուխանեանցի, հանգ. Յ. Աւլիբէկեանցի, հանգ. տիկ. Ա. Թւմնիբէկեանցի, հանգ. տիկ. Կ. Աղաճանեանցի, հանգ. Ս. Խաչիեանցի, հանգ. Հ. Հախումեանցի, հանգ. Յ. Տէր-Միքայէլեանցի, հանգ. օր. Կ. Բաբաեանցի, հանգ. Թ. Ղուկասեանցի և հանգ. տիկ. Խ. Առաքելեանցի:

Ցայտարարելով սոյն հաշիւը հոգաբարձութիւնը պարտք է համարում յայտնել իւր խորին շնորհակալութիւնը այն յարգելի անձանց, որոնք չեն զլացել նպաստել դպրոցիս այս կամ այն նուէրներով:

Նախագահ հոգաբարձութեան՝ ԽՈՐԷՆ-ՔԱՀԱՆԱՅ ԻՍԿԱՆԴԱՐԵԱՆՑ:

Հոգաբարձուք
Ի. ՔԱԼԱՆԹԱՐԵԱՆՑ
Դ. ԻՇԽԱՆԵԱՆՑ
ՍԱՐԳԻՍ ԻՒԶԲԱՇԵԱՆՑ

Քարտուղար Գ. ՀԱԽՈՒՄԵԱՆՑ

ի 20 Հոկտեմբերի 1895 Թ.
Շուշի:

Տպարան Ս. Մանուկ-Յակոբեանցի

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ Гос. Библиотека
26456-Կ.Հ.
ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ Гос. Библиотека ЗУСП-Арм.ССР им. А. Мясникяна

372
C-97

20095

2013

ՀՀ Ազգային գրադարան
NL0055173